ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թվականի կարիքների համար ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 14.11.2023թ. N 442/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.12.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ժ.Կարապետյանը, Հ.Կարապետյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանգասարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Բագրևանդի-82)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Աշխատանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորված ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ	ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակների տպագրության աշխատանքներ	4 410 000 000	20%	5 292 000 000	**5 292 000 000**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի սահմանված ժամկետում ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյան

Անդամներ՝ Ժ.Կարապետյան

Հ.Կարապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան